

ՀԱԻԱ պարբերականի մասին

«Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ»-ը (կրճատ անվանումը՝ ՀԱԻԱ) գրախոսվող պարբերական է, որն ուղղված է հնագիտությանը (հարակից գիտություններով), սոցիալական և մշակութային մարդաբանությանը, ազգաբանությանը, բանագիտությանն ու մշակութաբանությանն առնչվող խնդիրների գիտական քննարկմանը: Պարբերականի նպատակը **ն չ մ ի ա յ ն Ի ն ս տ ի տ ու տ ի հ ե տ ա գ ո տ ո ղ ն ե ր ի, ա յ լ- ն ա ռ հ ա ս ա ր ա կ ն շ վ ա ծ ո լ ո ր տ ն ե ր ի մ ա ս ն ա գ ե տ ն ե ր ի ն օ ր ա գ ոյ ն ու ս ու մ ս ա ի ր ո յ ու ն ն ե ր ղ ն ե ր կ ա յ ա ց ն ե լ ն է:** ՀԱԻԱ-ն համատեղում է տեսական ու գործնական մոտեցումները և ունի միջգիտակարգային ուղղվածություն:

Հոդվածը հրատարակության հանձնելու գործընթացը

ՀԱԻԱ-ում հրատարակվող հոդվածների հիմնական նյութը և եզրահանգումները պետք է պարունակեն գիտական նորույթ և չպետք է նախկինում հրատարակված լինեն:

Հոդվածի կառուցվածքը

1. Հոդվածը պետք է ունենա **մուտք** (անոտագիա)՝ 150-200 բառի շրջանակում, որը չպետք է նույնանա բուն տեքստի վերջում ներկայացվող եզրահանգումների և առանձին ամփոփագրերի հետ: Մուտքում պետք է համառոտ ներկայացվեն ուսումնասիրվող խնդրի էությունն ու արդիականությունը, հստակ նշվեն հիմնական նորույթը, նպատակն ու խնդիրները:
2. Մուտքին հաջորդում են 7-10 **հիմնաբառեր** (հիմնաբառերն արտահայտում են հոդվածի բովանդակությունը և ապահովում որոնողական դաշտում փնտրելու ճկունությունը):
3. Հոդվածի բուն տեքստը պետք է բաղկացած լինի հակիրճ **ներածությունից** և **ենթագլուխներից**՝ համապատասխան վերնագրերով, իսկ որպես վերջին ենթագլուխ ցանկալի է ունենալ **«Քննարկում»** կամ **«Եզրահանգումներ»** բաժինը:
4. Հոդվածի տեքստի ընդհանուր ծավալը (ներառյալ մուտքը, հղումները և գրականության ցանկը) պետք է լինի առնվազն 10, առավելագույնը՝ 20 էջ (1 էջը = 1800 նիշ):
5. Նշված էջաքանակից գատ կարելի է ներկայացնել մինչև 2 էջ ծավալ գրավող **աղյուսակներ** և **լուսանկարներ** (հնագիտական տեքստերի համար կարող են արվել բացառություններ):
6. Հոդվածից առանձին ֆայլերով ուղարկել հոդվածի **ամփոփագրերը**՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն (կամ հոդվածի շարադրման լեզվից տարբեր երկու լեզուներով), յուրաքանչյուրը 150-200 բառի սահմաններում: Ամփոփագրում պետք է օտարալեզու ընթերցողին հասկանալի լինեն աշխատանքի հիմնական նորույթը, ձեռքբերումներն ու եզրահանգումները: Օտարալեզու ամփոփագրերում կարելի է ընդգրկել նաև հոդվածի բուն տեքստի մուտքի և եզրահանգումների կարճ բովանդակությունը:

Հողվածի ձևավորման սկզբունքները

1. Հողվածի տեքստը պետք է ունենա Ա4 (210*297) չափ՝ կողմերից 20 մմ լուսանցքով, տառատեսակը՝ Sylfaen, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1, ուղարկել Word-1993-2007 ձևաչափով:
2. Հողվածի սկզբում պետք է նշվի հողվածագրի (կամ հողվածագիրների) անուն-հայրանուն-ազգանուն(ներ)ը, ապա՝ գիտական կոչում(ներ)ը: Այնուհետև փակագծերում պետք է նշվի աշխատավայր(եր)ի պաշտոնական անվանման հապավումը և հեղինակի պաշտոնը, էլեկտրոնային փոստի հասցեն, բջջային հեռախոսահամարը: Տառատեսակը՝ Sylfaen, տառաչափը՝ 11, միջտողային հեռավորությունը՝ 1:
3. **Վերնագիրը** գրել գլխատառերով, տառատեսակը՝ Sylfaen, տառաչափը՝ 14, միջտողային հեռավորությունը՝ 1: Վերնագրից հետո ներկայացնել մուտքը (տե՛ս վերը), տառատեսակը՝ Sylfaen, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1, ապա հիմնաբառերը, տառատեսակը՝ Sylfaen, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1: Հիմնաբառերը ներկայացնել այսպես.
Հիմնաբառեր՝ ամրոց, հնագիտական շերտ, գոտիներ, ... :
4. Տեքստում **թվերն ու դարերը** գրել արաբական (1, 2, 3...) թվանշաններով, դարերի դեպքում նաև մ.թ.ա. և մ.թ.: Արաբական թվերով նշել նաև բոլոր նկարներն ու աղյուսակները, գրքերի ու ամսագրերի հատորներն ու համարները: Հոմեական թվանշանները կարելի է օգտագործել իշխող կայսրերի, արքաների անունների հետ (օր.՝ Արգիշտի I, Կոնստանտին IX, Գագիկ II):
5. Հնարավորության սահմաններում օգտագործել **օտար բառերի** հ ա յ եր ե ն հ ա մ ա ր - ժ ե ք ն ե ր ը : Դ ր ա ն ց ք ա ց ա կ ա յ ու թ յ ա ն կ ա մ ո չ - լ ի ա ր ժ ե ք համապատասխանության դեպքում օտար բառը կամ եզրույթը գրել շեղագիր (օր.՝ նարատիլ, ստրատեգիա, սիմվոլ, ֆունկցիա նն):
6. **Գծանկարներ, դիագրամներ և լուսանկարները** պետք է ներկայացնել տեքստից առանձին (5-10 նկար): Նկարներն ուղարկել TIF կամ բարձրորակ JPEG ձևաչափով, խտությունը՝ գծանկարների համար 600 dpi, լուսանկարների համար՝ 300 dpi և ավելի բարձր: Նկարներն ու աղյուսակները պետք է նշվեն տեքստում՝ նախադասության ավարտին՝ վերջակետից առաջ՝ քառակուսի փակագծերով՝ [նկ. 1] կամ [աղ. 1] ձևով:
Լուսանկարները պետք է ունենան **բացատրագրեր**, ուր պարտադիր պետք է նշված լինի նաև դրանց սկզբնաղբյուրը:
7. **Ծանոթագրություններն ու հղումները** տալ էջատակերում՝ շարունակական համարակալմամբ: Ծանոթագրության թվանշանը տեքստում պետք է դնել կետադրական նշանից (ստորակետ, բուր, միջակետ, վերջակետ) առաջ և ոչ հետո: Հղումներում պետք է նշել միայն հղվող գրքի/հողվածի հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը՝ այդ գրքի կամ հողվածի լեզվով, այնուհետև՝ հրատարակության թվական, ստորակետ, հղվող էջ(եր)ի թվանշան(ներ) (առանց «էջ» բառի): Օր.՝ Մարտիրոսյան 1975, 17; Badalyan, Avetisyan 2007, 25-27:

Ա. Երկուսից ավելի հեղինակների դեպքում՝ նշել միայն առաջին հեղինակին + և այլք (ռուս. + и др., անգլ. + et al.): Օր.՝ Holzer et al. 2010, 2-10:

Բ. Նույն հեղինակի՝ նույն տարեթվով երկրորդ կամ երրորդ հոդվածներն ու գրքերը լրացուցիչ համարակալել այբբենական կարգով: Օր.՝ Պողոսյան 2015ա, 162; Պողոսյան 2015բ, 38:

Գ. Եթե նույն ազգանունով երկու տարբեր հեղինակ հրապարակումներ ունեն, ապա համառոտ հղման մեջ ազգանունից հետո նշել նրանց անվան սկզբնատառը: Օր.՝ Պետրոսյան Ա. 2015, 76; Պետրոսյան Է. 2015, 21:

Դ. Նույն ծանոթագրության մեջ իրար հաջորդող հղումները միմյանցից բաժանել կետ-ստորակետով: Օր.՝ Brown 2014, 654; Сорокин 2016, 51-57; Arikyan et al. 1985, 118, 120. Տարեթվից առաջ ստորակետ չդնել՝ Brown[,] 2014, 1, 654:

Ե. Նույն աշխատության տարբեր հատորները նշել այսպես՝ Brown 2014, 1, 654 կամ Brown 2014, 2, 654:

8. Հոդվածի վերջում տալ **հապավումների ցանկը** (եթե կան):

Օրինակ՝

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱ

ՀՀ Ազգային արխիվ

բ.ճ.մ.

բարձրությունը ծովի մակերևույթից

ԳԱԹ

Գրականության և արվեստի թանգարան

9. **Գրականության ցանկի ձևավորման պահանջները**

Օգտագործված գրականության ամբողջական ցանկը պետք է ներկայացվի հապավումների ցանկից հետո՝ հեղինակների ազգանունների այբբենական կ ա ր գ ո Վ, հ ա յ ե ր ե ն - ո ու ս ե ր ե ն - ա ր և մ տ ա ե Վ ր ո պ ա կ ա ն լ ե գ ու ն ե ր հերթականությամբ, և չպետք է գերազանցի 2 էջը (1 էջը = 1800 նիշ): Օգտագործված, բայց հոդվածում հղում չունեցող գրականությունը ցանկում չընդգրկել: Եթե հոդվածում օգտագործվել են նաև պատմական սկզբնաղբյուրներ, արխիվային նյութեր կամ ձեռագրեր, դաշտային աշխատանքներ, ապա դրանք ներկայացնել ա ո ա ն ձ ի ն ե ն թ ա Վ ե ր ն ա գ ր ո Վ, ի ս կ դ ր ա ն ց ի ց հ ե տ ո զ ե տ ե դ ե լ «Ուսումնասիրություններ» ենթավերնագիրը և համապատասխան ցանկը:

Արխիվային նյութերն ու դաշտային աշխատանքի տետրերը ներկայացնել նույն սկզբունքով, ինչ հոդվածը, օրինակ՝ Ամիրջանյան Մ. Խ., Արձվանիստ գյուղի ազգագրական նյութեր, 2018, 154 թերթ; Խաչատրյան Կ.Լ., Գրառումներ Տավուշի բանահյուսությունից // ՀԱԻ ԲԱ, FF IV, թերթ 121-365: Եթե դաշտային նյութերի տետր գոյություն չունի, ապա հղումը տալ միայն տողատակին՝ հետևյալ սկզբունքով. Լոռի, գ. Արձվանիստ, հաղորդեց՝ Գարուշ Հակոբյանը (78 տ.), 2021 թ. հունիսի 23; Սյունիք, Շիկահող, Եղվարդ գյուղեր, 2022 թ. օգոստոս:

Համացանցային աղբյուրները ներկայացնել՝ գրելով հոդվածի (տեսանյութի) հեղինակի անունը և վերնագիրը (առկայության դեպքում), կամ՝ կայքէջի անունը (այն հարթակի անունը, որտեղից բերվում է նյութը), ապա նշել համացանցային հղումը, որով մտնելիս անխափան բացվում է այդ էջը, ստեղծման ամսաթիվը (անհրաժեշտության դեպքում) և դիտման ամսաթիվը:

Գրքերի դեպքում գրել
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. գրականության ցանկը պետք չէ համարակալել:

Օրինակ՝

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկզբնաղբյուրներ

ԵՐԶՆԿԱՅԻ, ՀՄՔ

Յովհաննէս Երզնկացի, Հաւաքուժն Մեկնութեան քերականին // ՄՄ № 2329, 25ա-209ա:

ԱՐԵՎՍԱՏԻԱՆ, ԿԱԳՄԻՅԱՆ 1967

Արեւատյան Ս.Ս., Կաղմիւզյան Ս.Ս., Արմենիա // Музыкальная эстетика стран Востока (общая редакция и вступительная статья В.П. Шестакова), Ленинградский Государственный Институт театра музыки и кинематографии, Москва, «Музыка», 1967, 330-383.

ՄԱՐՔ 1894

Մարք Ն.Յ., Ստորագրութիւններ Վարդանի. Մատերիալներ իստորիոյ սրեւնեւիկոյ աւրմանկոյ լիտերատուրոյ (I-III, 1894-1899): շարժ. II. Տեքստ. Սանկտպետրբուրց: Տիպոգրափիա Ի.Ն. Տորոխոտովա, 1894; շարժ. III. Սրիլոյենիա, Սանկտպետրբուրց, Տիպոգրափիա Իմպերատորսկոյ Ակադեմիոյ Նաւկ, 1894.

Արխիվային նյութեր

ԱԱ 177, 1931

Վիշապազանց կուլտուր և Անահիտ, Հայաստանի պատմութեան թանգարան // ՀՀ Ազգային արխիվ, 177, 1931 թ., Լենինական, 84 էջ:

ԱԱ 187, 1935

Նահիլիի ճարտարապետութեան յոթ հրաշալիքները, Հայաստանի պատմութեան թանգարան // ՀՀ Ազգային արխիվ, 187, 1935 թ., Երևան, 95 էջ:

ԳԱԹ Ատրպետ 16, 1927

Վիշապազանց վորորանը // Գրականութեան և արվեստի թանգարան, Ատրպետ 16, 1927 թ. (II տետրը), Լենինական, 52 թ.:

ԳԱԹ Ատրպետ 39 Առաջավոր Ասիայի և Հայաստանի քաղաքակրթութեան պատմութիւնը //

Գրականութեան և արվեստի թանգարան, Ատրպետ 39, Տարեթիվ-տեղ բացակայում է, 70 թ.:

Ուսումնասիրութիւններ

ԱԲԵՂՅԱՆ 1946

Աբեղյան Մ.Խ., Հայոց հին գրականութեան պատմութիւն, զիրք Բ (XI-XIX դարի 30- ական թթ.), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1946:

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 2008

Բաղդասարյան Ա.Ն., Ավանդական նվագարանները Հայաստանում. Հին ժամանակներ, Միջնադար, Նոր ժամանակներ // Հայկական ժողովրդական նվագարաններ (խմբ. Ա.Ա. Փահլևանյան), Երևան, «Կոմիտաս», 2008, 3-17:

ԳԵՎՈՐԳՅԱՆ 1962

Գևորգյան Ա.Բ., Միջնադարյան երաժշտական գործիքները հայ մանրանկարչության մեջ // Բանբեր Մատենադարանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962, № 6, 337-352:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2000

Հարությունյան Ս.Բ., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, Համազգայինի Վահե Սէթեան տպարան, 2000:

ПЕТРОСЯН 2014

Петросян А.Е., Структурные связи армянских и осетинского нартского эпоса // Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը (խմբ. Ա.Ե. Պետրոսյան), Երևան, «Գիտություն», 2014, 47-53:

MAHÉ 1997

Mahé J.-P., Les humeurs et la lyre: fragments arméniens d'un enseignement médicomusicologique // From Byzantium to Iran. Armenian Studies in Honour of Nina G. Garsoïan (ed. J.-P. Mahé & R.W. Thomson), Atlanta, 1997, 397-413.

Համացանցային հղումներ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 2015

Աբրահամյան Լևոն, Թեմա 1, Օտարի ընկալումը // ԲՈՒՆ TV, URL: https://www.youtube.com/watch?v=BCwp_SkvTio&t=964s, դիտումը՝ 09.02.2023

***Ծանոթագրություն**

Եթե օգտագործված գրականության մեջ կա(ն) հայերենից, ռուսերենից կամ արևմտաեվրոպական հիմնական լեզուներից տարբեր այլ լեզուներով նմուշ(ներ), ապա բնօրինակ լեզվից բացի փակագծերի մեջ պետք է գրել լատինատառ տառադարձված ամբողջական տարբերակը և թարգմանությունը՝ հիմնական հոդվածի լեզվով:

10. Ամփոփագրերի ձևավորման պահանջները

Ամփոփագրերը ներկայացնել առանձին ֆայլով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով (տառատեսակը՝ Times New Roman, միջտողային հեռավորությունը՝ 1, տառաչափը՝ 12): Յուրաքանչյուր ամփոփագրի սկզբում պետք է այդ ամփոփագրի լեզվով նշվեն հոդվածագրի անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը, այնուհետև՝ հաստատության պաշտոնական անվանումը՝ առանց հապավման, դրանից հետո վերնագիրը (տառաչափը՝ 14), որից հետո՝ հիմնաբառերը (7-10 բառ):

Հոդվածներ և հաղորդումներ

ՀԱԻԱ-ն ընդգրկելու է հոդվածներ ու հաղորդումներ: Հոդված է կոչվում գիտական համառոտ շարադրանքը, որն ունի հստակ ձևակերպված խնդիր, որը լուծվում է սեփական կամ այլոց հավաքած նյութի ու տվյալների վերլուծությամբ, համեմատական քննությամբ՝ որոշակի մեթոդաբանության կիրառմամբ, տրամաբանորեն իրար հաջորդող ենթաբաժինների առկայությամբ, որոնք միտված են որոշակի օրինաչափության բացահայտմանն ու նախնական եզրահանգումների:

Հաղորդում է կոչվում տեղեկատվական բնույթի և պրակտիկ համառոտ շարադրանքը, որը նպատակ ունի շրջանառության մեջ դնելու որոշակի նյութ (դաշտային հաշվետվություններ, արխիվային նյութեր, մատենագրական դասակարգված տվյալներ ևն): Հաղորդման համար պարտադիր չեն մուտքը (աննոտացիա), եզրահանգումներն ու ամփոփագրերը:

Հրատարակման գործընթացը

Հոդվածներն ուղարկել HAIA.periodical@gmail.com էլ.հասցեին: Տեխնիկական պահանջներին համապատասխանող հոդվածներն ուղարկվում են գրախոսներին: Գրախոսների կողմից տպագրության երաշխավորված հոդվածներն ընդգրկվում են ՀԱԻԱ հերթական համար(ներ)ում: